

բարեկենցաղ . այլ եւ վարպետ քաղցրեղանակ ,
 Համեղածայն , որ մինչեւ ցայժմ նա ասէր ժամ-
 տետր եւ մեղեղիք , միայն ի Հանդիսի աւուրս :
 Զոր նա յաջորդեաց զաթոռն Երուսաղէմայ
 զկնի տէր Անդրիասին՝ ժառանգորդ եղեալ ⁸⁵
 սեփհական աթոռոյն . եւ եօթանասուն ամ
 նստեալ մեծաՀամբաւ վանքն սուրբ Յակոբայ
 առաքելոյն . զոր այժմ Հրաժարեալ յամենայնէ
 կամաւ եւ յօժարութեամբ՝ միայն ժամատաց
 գորով . զոր տվել էր նմա Պարոնտէրն մեծ ⁹⁰
 զարպաս Դ . Ե . օտայով , մուտպախով եւ
 պաղչով . եւ տարին ԲՃ զուռուչ օլօֆայ . եւ
 կերակուրն , զինին , Հացն վանից տանէին :

Սորա ժամանակն ձէլալիք ելան . ճանախին
 կապեցաւ . ժողովուրդն որն ազքատացաւ , ⁹⁵
 որն կորաւ . Երուսաղէմ ուխտաւոր չեկաւ .
 վասն այն պարտքն շատացաւ , զուլումն աւել-
 ցաւ . ԽՌ զուռուչ պարտք եղաւ . այլ ճար ու
 Հնար չի մնաց . ինչ անօթք կայր , ոսկեղէն ,
 արծաթեղէն , թէ՛ խաչ , սկի , բուռվառ , զիւրք , ¹⁰⁰
 եւ շուրջատ եւ այլն ամենայն զրաւեցան յա-
 նօրինաց . զի մեծ շահ կ'առնուին , ամիսն Ժ ,
 ԺԴ , ԺԵ . եւ Պարոնտէր Դաւիթն կակուղերես
 մարդ էր եւ ամաչօղ : Եւ կայր յԵրուսաղէմ
 սուրբ Յարութիւնն Կիրակոս քահանայ մի ¹⁰⁵
 Տրապիղոնցի եւ Սարգիս եպիսկոպոս , արք
 մեծատունք եւ երեւելիք , Հրաժարեալք յաշ-
 խարհէս՝ թողին զամենայն ինչս եւ զստա-

81 բարեկենցաղ : — 85 ժառանգորդ : — 89 օժա-
 րութեամբ :